

ՊՈՒԼԿԱՐԻԱ

ՊԱԾՄԱՆՆԵՐ

Տարեկան 8 ֆր.
Վեցամսեայ 4 ֆր.

ԱՐՏԱՍԱՀԱՆ

Տարեկան 10 ֆր.
Վեցամսեայ 5 ֆր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2. Տօլ.
Վեցամսեայ 1. Տօլ.

ԿԱՆԽԻԿ

ԾԱՆՈՒՑՄԱՆ ՏՈՂԸ
20 ՄԵՆ.



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔՍԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԷՆ ՇԱԲԱԹ ՕՐԵՐ

ՀԱՍՑԷ
Rédaction du Journal

„Игравункъ“
Varna

Редакция на
Вѣстникъ

„Игравункъ“
Варна

Իրաւոյնք եւս չեմ
տրուիր

ՎԱԹՈՂԻԿՈՍ Ո՛Վ ՊԻՏԻ ԸԼՈՍԻ

Կազկասի թերթերը սկսած են բուռն կերպով յուզել Կաթողիկոսական խնդիրը. բայց Մշակ սր էն հեղինակաւոր ձայնը ունի կողմասահայոց մէջ, տակաւին իր ընտրելին ցոյց չէ տուած, այլ միայն կը բաւականանայ առ այժմ կողմասեան ուրիշ օւկաններու կարծիքը ծանօթացնելով իր ընթերցողներուն:

Հոգեւոյս Իգմիրլեանի մահը փութացնելու մէջ իրենց տխուր գերերով ծանօթ երկու խումբերը—Գաղական և կղերական—իրենց Հորիզոն և Հովիտ օրականներով այսօր կաթողիկոսական ընտրելի խնդրով դէմ դէմ կը գտնուին: Յայտնի է թէ կղերականներու մէկ ստուար մասին ընտրելին էր և է Ս. Օրմանեանը, իսկ Հորիզոնականները ամեն ներքին և աններքին միջոցներ ձեռք կառնեն Օրմանեանը սեպնելու և անոր ընտրութիւնը անկարելի դարձնելու համար: Այդ խուժանապետները իրենց բոլոր ծանօթ առարկութիւններէն զատ նորմըն ալ մէջ տեղ նետած են, ըսելով թէ Օրմանեան կաթողիկոսութենէ առաջ եկած ըլլալով երբեք ներքին չէ զանի Հայաստանեայց անկախ և կեղծցուց հայրապետ ընտրելի խնդիր չէ թէ որ աստիճան բանաւոր է այս առարկութիւնը, այլ դիտելի է թէ կրօնական դաւաճութեանց մանանխի հետի չ. փ կարեւորութիւն չը տուող այդ խմբակը որ աստիճան մոլեռանդ ու բռնաբար կը ներկայանայ երբ կարգը իր դէզը պաշտպանելու գայ, իսկ ասոնց հակառակ Հովիտականները հայ հոգեւորականութեան մէջ միակ կարող անձը կը ներկայացնեն Օրմանեանը:

Ինչպէս կ'երևի երկու ընդդիմադրող խումբերը կոչուած են յառաջիկայ ընտրութեան մէջ զիրար չեղծացնելու: Հետեւաբար վճռական ձայնը պիտի մնայ Մշակականներուն և գլխաւորապէս թրքահայ պատգամաւորներուն:

Բայց այս երկուքն ալ առայժմ իրենց ընտրելին հրապարակ չեն դնել, մասնաւորապէս անոր համար որ Օրմանեանի մասին Ազգ. Ե. Բ. Բ. Ժողովը տակաւին իր վրէժներ չէ ալձակած և ուրիշ կարող և յարմարագոյն ընտրելի մը աչքի չի ընկնէր հայ եկեղեցականութեան մէջ:

Իրտելի է ոտ ուսերէն թերթերն ալ ամենայն հայոց կաթողիկոսի ընտրութեան խնդրով ըսկած են զբաղել և զբաղեցնել ժողովուրդը: Մօսկվայի Կլաւսթոս քովի լրագիրը «Կաթողիկոսական գաղտնիքներ» վերնագրով հետեւեալը գրած է.

«Ամենայն հայոց կաթողիկոս ընտրելու ամենից շատ շաներ ունի և Պօլսի նախկին պատրիարք Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեանը, որին հայ յեղափոխական խաժամուժ ամբոյսը (պերհ) քիչ մնաց բղկաէր թիւրքիայի պետական յեղաշրջման օրերում: Նրան մեղադրում էին հասարակական գաղափարներ բարձրելուն և նախկին սուլթան Աբդուլ-Համիդին կողմնակից լինելու մէջ: Սակայն բոլոր այդ մեղադրանքներին ներկայումս օչինչ չէ մնացել և Պօլսի հայոց երեսփոխանական ժողովը անհիմն է գտել բոլոր այդ ամբաստանութիւնները:»

«Օրմանեան արքեպիսկոպոսը ստույգի է բարձր, համալսարանական կրթութիւն Հռոմում և Պարիզում և ազատ էն խօսում է եւրօպական գլխաւոր լեզուները, որոնց թւում և ուսերէնը: Նա ունի մի քանի գնահատելի երկաթիւթիւններ հայոց եկեղեցու մասին ֆրանսերէն, իտալերէն և հայերէն: Օրմանեանը հռչակված է իւր և տաղանդաւոր վարչագէտ: Նա այժմ 67 տարեկան է, բայց դեռ կայտառ է և նախաձեռնի առողջութիւն ունի (նա բանջարակեր՝ վեգետարիանական է):»

(*) Իրտ. Իրաւունքի. — Ոչ թէ երեսփ. ժողովը, այլ այդ ժողովէն ընտրուած քննիչ յանձնախումբը:

«Երկրորդ կանդիդատը համարվում է Օրմանեանի աշակերտ Կարապետ Եղիսկոպոս Տէր-Մկրտչեանցը, որ ստացել է բարձր կրթութիւն Բեռլինի և Լայպցիգի համալսարաններում: Երկար ժամանակ Կարապետ Եղիսկոպոսը եղել է էջմիածնի ճեմարանի ղեկավար և վաշելի է իր աշակերտների անկեղծ սէրը: Այժմ նա Ատրպատականի թեմի առաջնորդն է: Ունի մի քանի յուրյ երկասիրութիւններ գերմաներէն և հայերէն: Նրա աշխատութիւններից մինը այժմ թարգմանվում է ուսերէն: Նա 46 տարեկան է:»

Օրմանեանէ և Կարապետ Եղիսկոպոսէ զատ կը խօսուի ու կը գրուի Պէտրապոյոյ առաջնորդ Սուքիաս արքեպիսկոպոսի և մէկ երկու համալսարանական վարդապետներու մասին: Բայց կը կարծենք որ վարդապետներու ընտրութեան վրայ գրելու խօսիլը աւելորդ է, քանի որ Պայսժէնիոյ օրէնքի դրոշմ տրամադրութեանց համաձայն պիտի կատարուի կաթողիկոսական ընտրութիւնը, չը թոյլտադրեր վարդապետի ընտրելութիւնը:

Այս բոլորէն զատ աշխարհական մը կաթողիկոսացնելու առաջարկներ ալ կան, որոնք սակայն «ձայն բարբառոյ յանապատի» մը նալու դատապարտուած են:

ՀԱՅ ԶԻՆՈՒՈՐՆԵՐԸ

Վանէն յունվար 10 թիւով մշակի կը գրեն հետեւեալը.

«Հայերի զինուորագործութեան հարցը ստացել է այժմ մի սուր կերպարանք: Հայերը զգլուժ են զինուորութիւնից ու դասալիք են լինում, այդ պիտի դասալիքների շարանները արդէն Մուշից քաղաքս վերադարձան ու սոսկալի բաներ են պատմում ոչնտեղի զօրանոցային դրութեան մասին: Տիֆ հիւանդութիւնն ահաւելի կոտորածներ է անում այնտեղ զինուորների քառորդ մասը զոհ է գնացել տիֆին ու նոյնչ փնէլ հիւանդ ընկել է. իսկ չը կան դարմաններ, չը կան կանոնաւոր

հիւանդանոցներ, բժիշկներ, իսկ առողջապահական գրութիւնը արդէն ողբալի է: Առողջ զինուորների պառկեցնում են հիւանդների անկողիններում, հիւանդներին մեռնողների անկողիններում և երբ զինուորները դժկամակում են, նրանց ձեռնում են: Ահա այս տեսակ վանդալութիւնների պատճառով վանեցի զինուորները, որոնք գտնվում էին Մուշի զօրանոցում, փախել եկել են քաղաքս և էլ չեն ուզում վերադառնալ այդ դժոխք—տանջարանները, ուր նրանց էլ սպասում է մահը, որոնք գանգատվում են նոյնպէս իրանց ընկերակիցների ու ենթասպանների կողմից վերաբերմունքից դէպի իրանք: Գեալսուր, քիւսփէրեայլն, ագեղ ամականներ սովորաբար տրվում են հայ զինուորներին, հայհոյանքներն էլ պակաս չեն լինում, որոնք վիրաւորում են հայերի օղջային ու կրօնական զգացումները:

Սրանց օրինակով գանգատներ անում են նոյնպէս Վանում ապրող զինուորները, որոնք գլխաւորապէս մշեցիներ են, բայց ոչ ի հարկէն ոչնչափով: Սրանց գանգատը այն է ընդհանրապէս, որ ենթասպանները խտրութիւն են անում հայ և թիւրք զինուորների միջև, հայերին աւելի ծանր ծառայութիւնների են պարտաւորեցնում, սովորականից աւելի պահակ են կանգնեցնում, կերակուրները կանեցուցիչ են և այլն:

«Այս և սրանց նման պատմութիւններ չըլան են անում ժողովրդեան բերաններում և խորտընեցնում են ստանց այն էլ արդէն զինուորական կեանքին անվերժ ժողովուրդին, որ զանազան հնարքներ է գործ դնում զինուորութիւնից զերծ մնալու համար: Սրանք ուշադրութեան արժանի խնդիրներ են, իսկ ազգ. պատրիարքարանը փոխանակ ոչք դարձնելու այս կարեւոր խնդրի վրա և զինուորութեան պայմանները դիւրացնելու, զբաղված է ներկայ վեճերով:

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՐՁԱԿԱՆԴ

Հ. Յ. Դաշնակցութեան նիստերի կոմիտէին յայտարարութեան համաձայն յունվար 29ին ժողովուրդը հաւաքուած է Բաւնէք Հօլին առջև, բայց 1 ուկէս ժամ սպասելէ յետոյ՝ ստիկանութիւնը ցրուած է և ժողովը տեղի չէ ունեցած, որովհետեւ սրահին դուռը չէ բացուած անբացատրելի պատճառով մը, զոր տուած ըլլան նոյն իսկ նախաձեռնողները:

Այդ ժողովին ատենախօսելու հրաւիրուած է հղեր Գեր. Մուշեղ Եպիսկոպոսը: Դաշնակցականք նը պատակ ունեցած են այդ ժողովին մէջ հանգանակութիւն ընել Գովկասի հայ բանտարկելոց անուամբ Տ. Մուշեղ Եպիսկոպոս հրաւերը չէ ընդունած հրապարակաւ սա պատճառները ցոյց տալով:

«1.—Այդ օրը ուրիշ տեղ ներկայ գտնուիլ խոտաւայած եմ:

«2.—Հաւատք չունիմ թէ կովկասահայ, քաղաքական բանտարկեալներուն գոտակ օր կրնան ըլլալ այս տեսակ ցոյցերը, այլ ընդհակառակն անոնց վրասակարգութեան համադրուել կարմատանայ մէջս:

«3.—Վստահ չեմ թէ այս դրամական օգնութիւնները պիտի գործածուին կովկասահայ բանտարկեալներու նիւթական պէտքերուն»:

Մուշեղ Սրբազանի այս բանաւոր առարկութիւններով յերժուհառիթ տուած է «Եւսքէք» եան խմբակին աճապատելու Սահանգար, Ռամկավար կուսակցութիւնը իբր արգելք հաղթօացող այդ ժողովի գումարման: Մուշեղ Եպիսկոպոս և Եր. Հայտատան» կը հերքեն այս աճապատելութիւնը և վերջինի մանաւանդ ժողովի արգիլումին բուն պատճառը կը նկատէ դաշնակցական նախաձեռնողները և յետ քննութեան հաստատած է իր այս ըսածը: Եթէ ոչ դաշնակցական տեղէն տղաքներ նոր եղբայրասպանութեան դիմելու չափ գրգռուած են եղեր:

Ուստի յոյն թերթին կը գրեն հետևեալը:

Բոլոր այն հայաբնակ գաղութներու մէջ, ուր դաշնակցական ձեռնածուութիւններ կը կատարէր, միեւնոյն ժամանակ Ռատարքանկ հայութիւնը վստահաբար գիտէր, թէ օր մ'ալ կարգը իրեն պիտի գայ, ուր Ակնունին այս անգամ իր բուն դերին մէջ՝ պիտի յիշեցնէր իրենց ազգային պարտականութիւնը՝ դաշնակցութեան հանդէպ:

Ու վերջապէս, չաբաններէ յետոյ, կարգը եկաւ: Թուշ. 13 ի երեկոյեան ժամը 7ին, Ռատարքանկ երկսեռ ազգայիններէ կազմուած բազմութիւն մը Eagle's Hall աթոռները գրաւած՝ անհամբեր կ'սպասէր ժողովի բացման:

Ակնունին իր ատենախօսութեան մէջ երեք հարիւր, անմեղ հուկրու քան,

տարկուած չորս պատճառի վերաբերեց, որոնցմէ միայն իրկուքը կը յիշեմ վարձուած անտեղի ծախսարութեանց տեղատարափին տակ: Ա.—Եփրեմի կատարած քաղաքականութիւնները Պարսկաստանում, Բ.—Պոլսոյ Ռուս Դեսպանի սխալ տեղեկագրելը Յարին, թէ թուրք կառավարութեան ղեկը հայերուն ձեռքն է: Այսպէս, ըսաւ ան, «Եփրեմի տարած յաղթանակները» և «Դեսպանին սխալ տեղեկագրելը» սարսափի մատնել է Ռուս կառավարութիւնը: Ան գիտէ թէ հայերը խելացի ազգ մ'ըլլալով սպառնալով իրեն հետ պիտի պայքարին: Անս' այս պատճառներով է որ Ռուսը հայաճալած քաղաքականութեան է հետեւում:

Պրն. Պողիկեան հանգանակութիւնը բանալէ առաջ ըսաւ, «Դուք ձեր պարտականութիւնը կատարեցէ՛ք, իոք չէ թէ ան իր նպատակին չ'աւանդուի, իոք չէ թէ խմբիկի կը ծախուի»: Հասկըցողին մէջ չ'անցողուն հազար իրենք որ պատկառելի գումար մը կը ակնկալէին Ռուսէն, կէս ժամայ տեւողութեան մէջ ո՛րքան հաւաքեն աղէկ է, հազիւ հարիւր յիսուն տոլարի բարձրացաւ, ան ալ իրենց ընկերներէն և համակիրներէն հաւաքելով:

Կարգը ձեռնածութեան եկած էր: Պրն. Թաշճեան բանալէ մը նախապէս պատրաստած՝ բեմին վրայ կարգացաւ «Նկատելով, որ Ռուս կառավարութիւնը անախարհիք քաղաքականութիւնով մը սկսած է ընդհանուր հալածանք մը շանդէպ կովկասահայերու:

«Նկատելով, որ երեք հարիւր անմեղ հայեր բանտարկուել են առանց քննութեան՝ Ռուստարքանկ հայերս, Յունւ. 13 ին գումարուող բողոք-ժողովին մէջ որոշեցինք:

«1.—Բողոքել Ռուս կառավարութեան այս քաղաքականութեան դէմ, որը բռնաբարութիւն է սամանաղըրութեան:

«2.—Պահանջել անմիջական քննութիւն և ազատ արձակում այս բանտարկեալներուն:

«3.—Դիմել այս որոշումն օրինակները Վալիսկիքներ Սազային կառավարութեան և Ռուս ղեկավարին»: Յետոյ աւելցուց, «անոնք որ կ'ընդունին այս բանալէ, թո՛ղ ոտքի ելնեն»: Դաշնակցական ընկերներ և համակիրներ ոտքի վրայ էին, իսկ մնացած հազիւ բազմութիւնն ալ աթոռներուն վրայ գաւաւ: Ժողովուրդէն խօսք ուղղութեամբ՝ դիտողութիւններ ընելու համար կանգնեցան, բայց անոնց պատասխանելու դաշնակցականներուն կողմէ, «Դո՛ւք լռեցէ՛ք, դո՛ւք պէտք չէ որ խօսք: Դո՛ւք խառնակիչներ էք: Լըմընցաւ մեր գործը...»:

Ժողովուրդէն ազմուել իրթաւ, «աղբար, այս ինչ ապօրինութիւն է այս ինչ գործարարութիւն է, այս ինչ անունի շահագործում է: Ոմանք ալ դուրս կը խուժեն, իսկ դաշնակցական «ազներ» պատերազմի դաշտին վրայ յաղթանակը տանող զօրաց պէս կ'երգէին:

Այո՛, պարոններ, պէտք է որ լռեն անոնք, և եթէ դարձեալ չլռեն՝ պէտք է որ սօփայով լռեցնէք, եթէ ատիկա սոսկ դաշնակցականներու կամքը պիտի ներգայացնէ, իսկ եթէ Ռատարքանկ հայութեան այն ատեն պէտք է որ բողոքեն այդ ձեռք ըրած ապօրինութեանց դէմ, պէտք է պոռալ, կանչել և նոյն իսկ՝ իրենց անունը չշահագործելու համար արգելք ըլլալու են այդպիսի գումարումներու:

ԹՈՒՐԷՈՅ ԾՈՒՐՁԸ

ԻՏԱԼԱՅԻՔ և ԱԼՊԱՆԻԱ

Հռոմէն կ'հետադրէ Թանի թղթաւիցը.— Հռոմի մէջ մեծ կարեւորութիւն չեն տար այն լուրին թէ կարիպայտի կուսակիցները, Ռիչիօթի կարիպայտի առաջնորդութեամբ, արշաւախուժ մը կը պատրաստեն Սկպան իոյ համար: Ընթարտութիւնն այն է թէ եւրոպական ուրիշ մայրաքաղաքներու մէջ եղածին պէս Հռոմի մէջ «Բրո-Ալպան» քոմիթէ մը կազմուած է, ինչպէս կան համանման քոմիթէներ՝ «Բրո-Արմէնի», «Բրո-Ֆինլանդի» և «Բրո-Բոսնի» անուններով: Հիմա «Բրո-Ալպան»ի բնականաբար մասնակից է Զօր. Ռիչիօթի Կարիպայտի, Մէնթանայի և Տրիստին հերոսին զաւակը: Արգէն 1897ի թուրքեանիցի պատերազմին ալ կամաւորներու մարմին մը կազմուած էր: Հռոմ գտնուող Ալպանիացի մէկ քանի գործիչներ վերջեւ եռանդաւոր բորթակներով մը ձեռնարկեցին իրենց երկրին համար և Ռիչիօթի կարիպայտի նամակ մ'ուղղեց լրագրիներուն, հրաւիրելով իսաւացիներուս արշաւներն օգնութեան իսթալու Ալպանոյ, ինչպէս իրենց տարեցներն ըրած էրն հելլեններուն համար 1897ին: Սէկ քանի հարիւր երիտասարդներ պատառնանք են այդ հրաւերի: Իտալիոյ կառավարութիւնը, մեծ կարեւորութիւն մը չտալով հանգրձեւ դածին, որոշած է բացարձակապէս թող չտալ կամաւորներու Ալպանիա երթալը: Կառավարութիւնը նաև պաշտօնապէս ծանուցած է իր այդ որոշումը:

ԺԵՕԵ-ԹԻԻՔ ԴՕՄԻԹԷՆ

Սօփիայի Վիկտորա Բոցբան թերթը թալէադ պէյի հրաժարման առթիւ կ'ընէ, «Այս փոփոխումն հետեանք է ժէօն Թիւրք քոմիթէին մէջ գժտութիւններու, որ տակաւին երկարատեւ կացութեան տէր պիտի մնայ, ինչպէս միտելով Դաշիճը կազմել խորհրդարանական մեծամասնութեան մէջէն միայն: Խալիլ պէյը ներքին գործոց նախարար ըլլին՝ եպարքոսութեան պատրաստելու համար: Թալէադ պէյ չէր յաջողած այս ճամբուն մէջ: Յուսարի չէ որ իսկ ժէօն Թիւրք Դաշիճի մը կազմութիւնով բարեփոխի Թուրքիոյ գործերուն ընթացքը, քանի որ քոմիթէին պետերը տարապալման ազգայնամով ընթացք մը բռնած կ'երթան»:

ՆՈՐ ՇՐՋԱՐԱՐԱԿԱՆ ՄԸ

Ներքին գործոց նոր նախարար Խալիլ պէյ Փետր. 6/19թիւով սա շրջաբերական—հետադիրն ուղղեց բոլոր գաւառաց:

«Վեհ. Կայսեր բարեացակամութեամբ, Երեսփ. Ժողովին վստահութեամբ և Աստուծոյ շնորհիւ ստանձնեցի ներքին գործոց նախարարի պաշտօնը, վստահ Սահմանադրութիւնն օրինաւոր կառավարութիւն մը հաստատած է վերջացնելով անձնական ու ժամանակ արարքները: Պաշտօնատարները, որք իրենց պաշտօնին կիրառմանը մէջ օրէնքն առաջնորդ ունենալու են, կրնան համոզուիլ թէ ներքին գործոց նախարարութեան պաշտպանութիւնը պիտի վայելեն և անուղղակի ալ Երեսփոխանական Ժողովի Հաւանակ պարագային պէտք է լաւ դիտան թէ պիտի պատժուին: Ռուստի կ'յանձնարարեմ որ շատ անկներ ըլ-

լաք օրէնքին կիրառումին մէջ և բացարձակապէս խոյս տաք ապօրէն կամ քմահաճ արարքներէ: Մեր հիմնական քաղաքականութիւնն այն է թէ բոլոր Օսմանցիները վայելեն ազատութեան և արդարութեան բարիքները որ նպատակ ունի ընդհ. միացումը, աշխատելով օսմ. հայրենիքին երջանկութեան ու զարգացման և այդ կերպով անհետացնել ազգայնութեանց միջև աւան անարարանութիւն, որ մեր Պետութեան ամենամեծ վէրքն է: Մասնաւորաբար կ'իշխուի ձեռք միջտ ալքի առջև ունենալ սա կէտը թէ նոր ուժեր մն ազգովին և ազգին համար կ'կառավարէ, պաշտօնատարները, ժողովրդեան հետ իրենց յարաբերութեանց մէջ, պէտք է բարեկրթութեամբ վարուին և օրէնքին սահմաններուն մէջ ղեւարա ու շուտով կարգադրեն անաւաններուն գործերն և աշխատին անոնց երախտագիտութիւնը շահելու վեհ. Կայսեր նկատմամբ: Օտարները մ'ըր յարգելի չ'ըւերն են: Ուրեմն անհրաժեշտ է համակերպիլ Պետութեան օրէնքներուն և քաղաքականութեան: Նաև լաւ վարուիլ անոնց հետ և երբ պաշտօնական դիմում ընեն, արթի եղած դիւրութիւններն ընծայել անոնց: Բարեկրթականներն այն տեսակ խնդիր մը չեն կազմեր որ կարենայ շնչուիլ միակ մէկ կողմին փափաքովը: Սակայն երկրին մէջ բարեկարգութեան ամբապնդութիւն և արդարութեան հաւասար բաշխումով մեծապէս յուսալի է թէ, բարեկամ տէրութիւնները մեր փառաւոր Սահմանադրութեան համար բարեացակամ մտադրութիւններ ունենալով, այդ կարեւոր խնդիրը գործադրելի կերպով պիտի լուծուի մօտաւոր ապագայի մը մէջ: Սակայն, մինչև որ կառավարութիւնն որոշում մը տայ, պաշտօնատարները պէտք է յարգեն դաշնադրութեանց բոլոր տրամադրութիւնները: Սիշտ ալքի առջև ունենալով այս զլխաւոր կէտերը, ջերմապէս կը յանձնարարեմ ձեռք մեծ գործունէութիւն ցոյց տալ ձեր պաշտօնին կիրառմանը մէջ»:

ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱԿԵՒՈՒՆԻՍ

Պուլկար ծանօթ յեղափոխական Չէրքեզէլի նախագահութեամբ մակեդոնական յեղափոխ. կազմակերպութեան մը վերականգնութիւնը կ'իմանանք Տնկվիկէ:

Տնակցութեան մը մէջ Չէրքեզէլի յայտարարած է թէ այս կազմակերպութիւնը ինը տարի առաջ հաստատուած էր և այժմ վերականգնուեցաւ և Մակեդոնիոյ Պուլկար ժողովուրդին մէջ լաւագոյն ընդունելութիւն մը կը գտնէ: Կազմակերպութիւնը նպատակ ունի կազմակերպել այդ ժողովուրդը, որպէս զի պատեհ առթիւ ճնշում մը բանեցնէ պաշտօնական Պուլկարիոյ վրայ: Նոր կազմակերպութիւնը բաւականութեանց ձեռնարկեց ալպանական յեղափոխական խումբին և Մակեդոնական ուրիշ նման խումբերու հետ հաւաքական գործակցութիւն մը առաջ բերելու, Մակեդոնիոյ ինքնօրինութիւնը ձեռք բերելու համար: Վաղմակերպութիւնը մօտեւրա իր թերթը պիտի ունենայ Սօփիայի մէջ և զայն պիտի տարածէ Եւրոպական Թուրքիոյ մէջ:

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԼՈՒՐԵՐ

Ուրախութեամբ իմացանք թէ ծանօթ գրողէտ և վիպասան Տ. Աւետիս Ահարոնեան՝ որ նովոյէրկաւքի (բանտին մէջ) կը հեծէր ազատարձակուած է, 20,000 ռուպլի երաշխաւորութեամբ, Յիշեալին այս պայմանադրական ազատուած գոնէ առիթ պիտի ընծայէ իր հիւանդագին վիճակը դարմանելու:

Գոշնակցութեան պոռոտախօսութեանց պատճառաւ բանտարկուած միւս 300 ի չսփի Հայերուն ալ նախնական քննութիւնները աւարտած ըլլալով, հաւանական է որ անոնց շատերն ալ երաշխաւորութեան փոխարէն արձակուին բանտէն մինչև դատավարութեան օրը՝ որ չենք կարծեր թէ շատ ուշանայ այլևս:

—Հոգեւոյս Իզմիրեան կաթողիկոսի մահէն յետոյ 894 ռպլ. 74 կոպէկ դրամը ելած է ըստ իր ելեւմտից տոմարին: Այդ գումարը յանձնուած է էջմիածնի գանձարանին:

—Քանի մը ամիս առաջ կովկասի մէջ վախճանած Գառնակերեան ծերունազարդ եպիսկոպոսէն ևս ելած է 5003 ռուպլի: Այս եկեղեցականը բնիկ եւզոկիացի Գուրտեան ընտանիքէն ըլլալ կը կարծենք և լաւ գիտենք թէ Գուրտեան մականունը հայացնելու և (Գայլեան) չըսելու համար, փափկացուցած և Գառնակերեան ըսած են, սա ծիծաղելի դրամաբանութեամբ որ գայլը միշտ գառնուկ ուտել կը ձգտի:

—Խրքահայաստանի քաղաքներէն միոյն մէջ հայ համալսարան մը հաստատելու համար 4 միլիոն ֆր. չ. փ. հարստութիւն մը կտակող հանգուցեալ Աւետիս Ղուկասեանի միակ զաւակը, Օր. Խամարա Ղուկասեան Մոսկուայի մէջ մեռած ըլլալով, մարմինը Տփլիս փոխադրուեցաւ և յուղարկաւորութիւնը մեծ հանդէսով կատարուեցաւ: Բոլոր հայ հաս. ժողովութիւնները ազգային բարերարի մը վայել պատիւ ընծայեցին մատաղատի հանգուցելոյ: Իսկապէս իր ծնողաց զերեզման, ներուն մէջ տեղը խնամօք զետեղուեցաւ Ազգ. Պատրիարքայանի կողմէն ներկայ գրտնուեցաւ Մշակի խմբագիր Տ. Հ. Առաքելեան, Հանգուցելոյն հայրը, այսինքն բուն կողակարարը բաղաժիւ բարերարութիւնները բրած է ազգին կովկասի մէջ: Օրհնեալ ըլլայ իր յիշատակը այժմ ազգին կը մնայ խոհական քայլարով իրականացնել կտակարարին բուն նպատակը, այն է, ինչպէս կը կարծենք մենք, Տաճկահայաստանցի պատանիներուն քարձը կըթուլին տալ բուն իսկ Տաճկահայաստանի մէջ: Մասնաւոր յօդուածով մը պիտի անդրադառնանք այս կէտին:

ԻԶՄԻՐԵԱՆԻՆ ԴԷՄ

Ամերիկայի Դաշնակցականներու օուկոն Հայրենիք թերթը որ ամէնէ աւելի յարձակողը և լիրը ու անպատկառ լեզու գործածողը եղաւ հոգեւոյս Իզմիրեան կաթողիկոսի դէմ, երբ մանաւանդ Նորին Ս. Օծութիւնը և կեղեցիկներու մէջ միթիւնները արգելող կոնգրէսը գրեց, այս անգամ ալ Անոր գերեզմանէն անդին, լրբութիւնը ունեցած է սա տգեղ սրակոմիները ընելու: «Դասալիք վերջին ժամուն», «չին. ծու ազատական», «պահպանողական» ներու թմբուկը դարձող», «բռնապետական հակոճմն ունեցող» և այլն: Եւ այս ամէնը կը գրեն Իզմիրեանի դէմ միմիայն անոր համար որ Ակնուիթէ խոստացուած իր կողքին դրուելիք «դաշնակցական բանակներուն» կարևորութիւն չտալով, չենթարկուեցաւ անոնց կամքին, ինչպէս ենթարկուած էր Սրբման իր վերջին օրերուն մօտ:

Գաղափար մը տալու համար մեր ընթերցողներուն, արտասպէսք հոս Հայրենիք չըլլալիք յօդուածին մէկ քանի տողերը:

—«Իզմիրեան վախճանեցաւ...

«Տպաւորութիւնը զոր կրեցի, անկեղծօրէն ըսելով չի լացուց զիս, բայց խորապէս տխրեցուց: Իր կաթողիկոսական պաշտօնէն ի վեր ոչ կրցի սիրել զինքը և ոչ ալ առել: Ու այս վայրկեաններուն իսկ յիշեցի, վերապրեցայ Սրբմանի յիշատակը:

«Անաւարկ մեր դէմը, անցեալին գիրկ երկու հայ ծերունիներ, վշտերու և տառապանքի ծանրութեան տակ վաղաժամ ծեր ու դողդոջ կնճիւղը իրենց ճակտին ու պարտոված ու մաշված խաչը ձեռք. հալածական ու յուսա. հաս, սգաւոր ու երազկոտ Բայց մինքն զոքոքաբէմ, միւսը խոթողաբէմ. մին գութի, քաղցրութեան աւազան մը, միւսը ըմբոստացումի շատրան. Սրբմանը սուրբ մը, ոչ աւելի, ոչ պակաս իզմիրեանը զինքը մը վերջին ժամուն դասալիք: Ու ևս քաջութիւն կուենեամ ըսելու, որ Իզմիրեանի կարճ պաշտօնավարութիւնը ծառայեց միմիայն Սրբմանի մեծութիւնը չեշտելու:

«Բնորոշներն ու չղոքորթները և կամ անոնք իսկ. որ մասնակից էին այդ դաւին, երբ զինքը գիշերանց աքսուրեցին, բաւ մը չը մնաց որով չը զարդարէին անոր անունը, անպակաս և զան անոր քղանձներուն քովէն ու թունաւորեցին զայն այն թոյնով, որ յետագիւորութիւն կը կոչվի, և որուն վախճանը մահ է միայն... Գերեզմանը միայն կրնայ անոնց ազատութեան բաղձանքը ներշնչել, երբ հողին մէջ կաշկանդված կը գտնեն իրենց մարմինը... Սրբմանի մահվան օրերուն քարսիրտ պոլսահայր իսկ լացաւ. ու սուգը խորապէս ու գաղտնապէս կրեցինք մեր սրտերուն մէջ, առանց կարելալու միթիւնութիւն մը որոնիլու անոնց մէջ իսկ որոնք բոլորիս չափ անկեղծութեամբ լացին, լացին ոչ միայն Հայրիկին համար, այլ նաև անոր համար, որ պակսեցաւ ռահվիրաներէն մէկն ալ ազատարար կուրին: Բայց այսօր նոյն պոլսահայր եթէ արտասովեց իսկ, մեծապէս ան ցաւը ունէր, որ կորսնցուց իզմիրեանը, որ սկսած էր պահպանողականներու թմբուկը դարձնել...»

«Բայց այդ լուսաւոր դէմքը աւելի պայծառ էր նրբաւորէմի խորքը, քան երբ Մասիսն ի վեր բարձրացաւ, երբ հոն նախապէս փայլած արեւը, խաւարեց նորածագ լուսնի մը շողերը: «Ոմանք կարծեցին թէ երկաթէ Պատ-

րիարքը Ոսկիէ կաթողիկոս կրնայ ըլլալ, առանց մտածելու թէ՛ տոկուն երկաթը շատ դժուար է, որ փոխակերպվի ոսկիի:

«Եթէ պատմագիրը Իզմիրեան ներկայացնէ մինչև այն օրը, երբ դեռ Պաղեստինի ափերը կը թափառէր, շատ քիչ բան պիտի գտնայ, որքան ալ անաչառ ըլլայ ան, նսեմացնելու, ժանգոտելու, այդ երկաթին իսկ, 1908-1910 թուականները շատ բան պիտի կորսնցնէ ան, իր համբաւէն, իր «ազատականի» չինձու անունէն:

«Առ յաւէտ պիտի սիրենք զինքը իբր 1896-ի պատրիարքը, իբր 10-ամեայ աքսորական, իսկ եթէ վերջինք մօտաւոր անցեալը, իր բռնապետական հակոճմները, որոնք չեշտվեցան իր մէջ, թերևս խօսքեր ունենանք մեղադրանքի քան գովարանութեան, որուն արժանի էր և պէտք էր, որ մնար ամեն կերպ:»

ԱԶԳԱՅԻՆ

Ազգ. Պատրիարքարանի Խառն ժողովը անցեալ ուրբաթ օր առաջին անգամ ըլլալով Տեղապահ Տ. Վահրամ Սրբազանի նախագահութեամբ նիստ ըրաւ և ընդհանուր խորհրդակցութիւններ կատարեց Օսմ. Հայ երեսփոխաններու հետ, որոնցմէ Վարդգէս, Գեղամ և Թօք. Տաղաւարեան երկարօրէն խօսեցան գաւառներէ վերջերս հասած բողոքագիրներու և տեղ տեղ գործուած բռնութիւններու մասին:

Ասոնց մասին Պատրիարքարանի կողմէ վերստին կառավարութեան մօտ դիմում ըլլալու պէտք տեսնուեցաւ, որուն ոյժ պիտի տան նաև Հայ երեսփոխանները, և նորընտիր ներքին գործոց նախարարին՝ որ միանգամայն Օսմ. Թոմարթէին նախագահ է, պիտի բացատրուի բողոք եղած տեղերուն մէջ տիրող անտանելի վիճակը, Գրուելիք թագրերին հիմերն որոշուեցան, սակայն անկէ առաջ բողոքուած տեղերէ քանի մը լրացուցիչ ժանրամանութիւններ ստանալու պէտք տեսնուեցաւ, որպէսզի կառավարութեան աւելի որոշ կերպով ներկայացուի փաստերը, պատասխանատու և զողներուն կողմէ առարկութեա՝ առիթ չմնալու համար, Կլխաւորութեան ժողովին ուշադրութեան առարկայ եղան Վանէն հասած տղեկութիւնները, որոնցմէ կը

հասկցուէր թէ տեղոյն աշիրէթ. Իներն սկսած են իրենց մարդոց ձեռքով սպաննութիւններ կատարել և ոճրագործներն ալ չէին ձերբակալուած: Խնդիր հղաւ նաև Մշոյ կրթական տուրքերու հաւաքչներուն ձերբակալման տուներու խուզարկութեան, Հայոց Պատմութեան դէմ հանուած արգելքը, նկատի առնուեցան կարգ մը կառավարիչի պաշտօնեաներու Հայատեաց վարմունքները, Առաջնորդարաններու դիմումներուն անհետեւանք մնալն, և տեղ տեղ տեղական իշխանութիւններու աշիրէթներու հանդէպ բռնած համակերպական ընթացքը: Ասոնցմէ պատմաուցանելի յիշատակագրին մէջ պիտի խօսուի Անատոլիոյ գաւառներու մէկ մասին մէջ տիրող երկիրաւի վիճակին վրայ, որուն համար ապահովութիւն պիտի պահանջուի, իսկ երկրորդին համար ալ փոխանակ դրամական հատուցման, հողով փոխանակութիւն, ուղղհետեւ դրամը կրնայ վատնուիլ: Այս խնդրերը, որ գաւառական քարեկարգութեան խնդիրն է, բաւական առաջ քաղեցուց ժողովը, հետեւաբար առիթ չեղաւ ուրիշ խնդիրներ ալ նկատողութեան առնելու:

— Տ. Յովհան Ա. քհն. Մանդակունի կալացէն Պոլիս անցնելով, կարգ մը տեղեկութիւններ հաղորդած է Ռումանիոյ և Պուլկարիոյ հայոց յարաբերութեանց մասին: Ռումանահայք ժամանակին պատրիարքարանէ վարչական անկախութիւն ձեռք բերած ըլլալին կը պնդեն եղբր, իսկ կառավարութիւնն ալ իր տեսակէտով պէտք չի տեսներ հայ առաջնորդութեան մը կազմակերպութեան: Սակայն պուլկարահայոց և պուլկար կառավարութեան տեսակետները տարբեր ըլլալով այս երկու հոգեւոր հովուութիւնները իրարմէ զատել հարկ տեսնուեր է: Պայագեան վարդապետ թէ և պատրաստակամութիւն ցոյց տուեր է Պուլկարահայոց հովուութիւնը ընդունելու, բայց դիտել տուեր է թէ հարկ է նախ իր դիրքը ճշտեցնել կառավարութեան: Ուստի Խառն ժողովն Պատրիարքարանի Պուլկարիոյ դէմ:

ՏՊԱՐԱՆ «ԻՐԱՆԻՈՒՆԻԿ»

ԿԸ ՏՊԱԳԻՌՈՒՄ ԲԱՐՈՒՄ ԵՒ ԶՈՒՄՈՒՄ ԳՐԱՆԻՈՒՄ

ԱՄԵՆ ՏԵՍԱՆ ԳՈՐԾԵՐ

Հարսանեկան Հրախրագիր, Այցատու, Նամակագրութիւն, Պահարան

Պարսամուրհակ, Հաւուրուրքեր և ուրիշ գործեր

Հայկերէն, Պոլսկարերէն, Փրանսերէն և Ռումաներէն

Մեզ դիմողներու ճաշակին գործաւոր տալու համար Տպարանս նոր բերել տուած է ամենավերջին սիստեմի գործիքներ և տառեր

ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԿԸՆԴՈՒՆՈՒՆ ԿԱՆԱՎՃԱՐՈՎ ՄԸ

պանին և Եկզարքին ու խօսիլ թէ՛ հոգևոր հովուի գիրքին և թէ հայ վարժարանաց խնդրոյն նըկատմամբ:

ԹԻԻՐԲԻԱ ՎԷ ՊՈԼԿԱՐԻԱ

Թիւրքիա վէ Պոլկարիա պէյնիստէ պիր մուվազաթ թիւարէթ անտնամէսի իմզանանմը տըր: Պու անտնամէ մու- ճէպինճէ՝ հէր իքի մէմալիքին մալլէրի էն էնվան կէօմրիկէ իքի թարաֆտան գապուլ օլունանագ տըր: Պոլկար մալլարընտան թիւրքիա 100 տէ 11 կէօմրիկէ ալանագ տըր: Թիւրքիա մալլէրիին տախի Պոլկարիա 12 սըն- ֆա թազսիմ իտուպ 100 տէ 4-8 կէօմրիկէ ալանագ տըր:

Մէզքիւր անտնամէսէ վարօրլար մէ- սէլէսի իշիւն նիւայէթ շու գարարլար վէրիւմիշ տիր: Օսմանլը վէ. Պոլկար պալարալարը թաշլան վարօրլար կի- րէճէլէրին իլիմանլարտա տիկէր տէվ- լէթլէրին վարօրլարը կիպի վէրկի էօ- տէյէճէլէր: Բօլիսիա մէմուլարընըն հագգը օլանագ՝ գօնսօլսարա միւ- րանաթ իթմէքսիզին վարօրլար իշէրի- սինտէ հօգլամա իճրա իթմէկէ: Իշպու անտնամէ էօնիւմիզտէքի հոկտեմբեր ալընա գատար իճրա օլունանագ, վէ իքի աշվէթին Բարլումանլարընտան թաստիգ օլունունա գատար շիմտիքի կէօմրիկէ մուհարէպէսի տէվամ իտէճէք տիր:

Յագաթ Պոլկար էլիսի Մ. Սարա- ֆու իշպու անտնամէ տէր հալ Սօֆ- իայա կէթիւրուպ, Սօպրանիէնին թա- տիգինէ ինալէ իթտիրմիշ տիր շու հալ- տէ պիր գաշ կին գարֆընտա մէզ- քիւր անտնամէ մէվգըր իճրայա գօ- նուլմուշ օլանագ վէ պու սալէտէ պիր վագըրթտան պէրու հէր իքի մէմալիք- տէ գուհուրա կէլէն միւշքիւլաթ գալ- քանագ տըր:

— Պիր գաշ կիւնտէն պէրու իթա- լիա՝ Պոլկարիա վէ Սերպիա իլէ՝ Պալ- գան մէսէլէրի հագգընտա Ղուտրիա- յա գարըն պիր իթթիֆագըն ագտընա պաշլամըն օլաղընը, Վիլնիստան ալ- տըղլարը մալլամաթ իւղրէ Պոլկար թէլէկրաթ աճանսլարը իտպէր վէրիւր:

Սըրպ գըրալընըն պու կիւնլէրտէ Բօմատա պուլընտըղը վէ սօն տէրէճէ- տէ ասարը մուհապլթ վէ սամլմիլէթէ նալիւր օլաղըն տախի ճալիպի սըգգաթ տըր:

Եէնի անտնամէ մուճիպլնէ 12 նէվ Օսմանը մալլէրիտէն Պոլկարիտա ալընանագ կէօմրիկէ շու կիպի տիր: 100 քիլօկրամ իւղէրինէ Լաքէրտան 100 քիլօտան 30 ֆր: Բալամուտ, Սիւմուր, Խամսը Սալիւրտի, Սարտէ- լիա, Նամ պալըգլարտան 8 ֆր: Զա- մասուր սապուր՝ 10 ֆր: Իւղիւմտէն Եաղընա բէթմէզտէն 8 ֆր: Գուլթու ինճիլնտէն 8 ֆր: Թօրպա ինճիլն- տէն 4 ֆր: Խուրմատան 7 30: Զէլթու- տանէստէն 4 ֆր: Սուսամտան 4 ֆր: Բանաթ լօգուս շէքէրիտէն 4 ֆր: Կէլվատան 3 ֆր: Կօյալը պօ- յասըգ բամուգ՝ իքէկիլէրիտէն 20 ֆր:

Հ Ա Վ Ա Տ Ի Ս Ա Թ

ԹԻԻՐԲԻԱ

Մէզքիւր Մէպուստանըն էքսէլիլէթի թէշքիւ իտէն ժէօն- թիւրք ֆըրգասր նաղըրլարտան պիր գաշընը իսթիֆայա մէճպուր իթմիշ օլարագ, տախիլէ նաղըրը թալեաթ պէլին Եէրինէ մէզ- քիւր ֆըրգա ըլիսի Խալիլ պէյ թալին օլունտու: Մէարիֆ վէ նաֆտա նա- ղըրլարը տախի շէքիլտիլէր: Պու տէ- ֆա թալեաթ պէլտէ Խալիլ պէլին Եէ- րինէ մէզքիւր ֆըրգայա ըլիս ինթի- խապ օլունտու:

— Սատրազամ վէ ոէրասքէր բաշալար Սթանպօլըն իտարէի աքէրիլէսինին միւստէթինին ալթըրմագ իշիւն Եաղըն- տա պիր գաշուն լախիլէսի մէզքիւր մէպուստան թագտիմ իտէճէլէր ի- միշ:

— Եէմէլիլէրին պիր գըրմը իւլթիւ- մէթէ թարաֆ թուլարագ, ասըլարա գարըն միւստաֆա իթմէքտէ օլաղը վէ տիկէր թարաֆտան Եէնի աքէր Զօտէյտայա Եէթիլմէկէ պաշլամագլէ ասըլարըն իւղէրինէ ինճուստ հագըր- լանտըղը թիւրք մէնպալարընտան պիտիլիլլօր:

Պուստիլէ պէրապէր Սանաա շէրի- նի իտաթէ իտէն պիր աղ ասըլար տա- խի իշէրտէքի աքէրիլէրին ինճուստ- տան մաղլուպ օլմաղլէ կէրի շէքիւ- միշլէր իմիշ:

— Եունան սինօրը իւղէրինտէ իքի թաիաֆըն աքէրիլէրի պէլինտէ պիր միւստաթմէ վուգու պուլմուշ վէ 9-10 աքէր էօմիշ վէ Եալէլէնիմիշ տիր:

— Հուրիլէթ գաշրամանը Եսլէր պէյ Սուլթանըն աղտուսը իւղրէ անըն թէ- ալլիւգաթընտան պիր բրէնտէն իլէ էվլէնէճէք տիր:

Տ Ա Խ Ի Լ Ի Ե Է

Սօպրանիէ իճթիւլարընը մարտա գաշտ տէվար իտէճէք տիր:

— Սթանպօլ էլիսի Մ. Սարա- ֆու Սօֆիայա կէթիւրմիշ վէ Սօպրանիէնին թէտգրգրա իհա- լէ իտիլիլ օլաս թիճաթէթ վէ կէօմրիկէ անտնամէսի Սօպրանի- էտէն գապուլ օլունտու օլաղըն պիտիլիլլօր:

— Սօպրա Սէրպիա գըրալը Մի- լտըն ղալըն մէշրու օլու Սօֆի- այա կէլմիշ օլուպ, Սթանպօլա կիթմէք իշիւն՝ ինթիսթր Մ. Թա- քէվտէն պիր շէքէնտֆէր պիլէթի իսթմիշ, ֆագաթ Մ. Թաքէվ վէրմէմիշ տիր:

— Եաղընտան իթիպ սրէն Եէնի բօթա բուլլարը թէտալիլէ շը- գանագ տիր: Եսլի բուլլար իտէ ապրիլ 30ընա գտտար մէվգըր թէտալիլտէն գալտըրըլանագ տըր:

— Տիւնքի կիւնտէն իթիպտէն թիւրքիա մալլէրի իշիւն՝ կէօմ- րիկ մուհարէպէսինէ նիհայէթ վէրիլմիշ տիր: Իքի թարաֆ հիւ-

քիւմէթլէրի Եէնի թարիֆէ վէ մուգալէլէ իւղէրինէ կէօմրիկ ալընմասընը իճագ իտէն տաիւ- էլէրինէ պիտիլիլլէր տիր:

— Թաշթըր մէտուլիլէթէ ալը- նան սօպըգ Սթանպօլիլմի մի- նիւթէրլէր Սօպրանիէտէ մուհա- քէմէյէ տալէթ օլունտուլար:

Եսլըն Չ. Զագլէթլէրինին իսթի կիւնիւ օլմագ միւնտապէ- թի իլէ պիր շօր մահպուլար աֆ/ իտիլմէքլէր տիր:

— Վիւքէլա ըլիսի վէ իտարիճիէ նաղըրը Մ. Մալիւնլըն Սօֆիա- տարի իթալիա էլիսի իլէ կէօ- րիլ շիլշ օլաղը Պալգան իթթի ֆագընա պիր տէլիլ տտա շու- նիլլօր:

— Սօպրա Սթանպօլիլմի մի- նիւթէրլէրին իսթիլմագր վէ էվրագը սաիլէր Սօպրանիէտէ օլունտու: Լիպէրալլարտան մա- ատա տիկէր բօթիլիլէրին մէ- պուլարըն ըէք մէմուս, գալլըն- լար:

— Չար հօպրէթլէրինին իթա- լիա գըրալընը Բօմատա գիլա էթ իթմէլէրի իշիւն Մ. Մալիւնլը վէ իթալիա էլիսի պէլինտէ մուպաշէտ օլունտու տար վէ Բօմա իլէ մուլապէ, ալ ճէրէնա իտէր իմիշ:


Սըրպ գըրալընտան սօնյա Չար Թէրտիւստըն ալախ Բօմալա կիթմէլէրի Եէնի պիր իթթիֆա- գր միւստէլէտէ թէշքլիլնէ աա յիւր շրգըր օլան շալէաթ թաս- տիգ իտէճէք տիր: Յագաթ պու իթթիֆագ պաշլընա Աստրիայա գարըն օլմագտան գիլաթէ՝ Ալ- պանիա վէ Մաքէթոնիա իշիւն օլունտու թիւրքիայա գալըն օլունտ օլունտու տըր:

— Չար սէրալընտա էվլէթի աղշամ պէօլիկ պիր պալօ թէր- թիպ իտիլմիշ օլուպ, 200 տէն գիլաթէ ինճալ տէվլէթ վէ սա պագ հիւքիւմէթ ընճալարը վէ Սօֆիա մէօթպէրանը ղէվճէլէրի իլէ պէրապէր տալէթ օլունտու շ- լար տըր:

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

«Իրաւունք» իմքագրա- տունէն կարելի է ստանալ Հետեւեալ գիրքերը:

ՂԱՐԻՊ ԱԽՊԵՐ գին 1 ֆր
ԱԶԱՏ ԵՐԳԱՐԱՆ » 1 «
ԹԻԱՊԱՏ Ա. հատոր » 1 20 «
ԹԻԱՊԱՏ Բ. » 2 80 «
ԿԱՐՄԻՐ ԵԱՄՈՒՅ » 1 «
ՊՈԼԿԱՐԱՏ ՊԱՏՄ. 50 ս.
ԻՐԱՆԻՆԻՔԻ հաւաքածոյ մէկ տարւանը 12 ֆր:



ԹԻԻՐԲԻԱ

ՉԱԽՈՒՐԷ	
ՊՈԼԿԱՐ	
Վալօն 100 քիլօ.	14.75/16.75
Արապա 5 շիւրկի	11.30
ԱՐԲԱ	
Վալօն 100 քիլօ	11.90
Արապա 5 շիւրկի	7.
ԵԱՄԱՆ Վալօն	9.80
» արապա	4.90
ՉԱԿԱՐ 100	11.32
» Արապա	7.17
ՅԱՄՈՒԼԻԱ 100 քիլ.	24.
ՏԱՐԸ 100 քիլօ	9.20
ՄԻՍԻՐ 100 քիլօ	10.60
ՅԻՅ 5 շիւրկ	11.20

ՊԱԳԱՐԷ	
Վառնա ըրադարընտա պագալիլէ մալ լէրին պու կիւնքի ֆիլաթը. ալթըն ֆը- րանք իլէ:	
ԳԱՀԷ	2.70/2.87
Շէքիլ իւղէ քէլլէ	88/90
Շէքիլ քէլլէ սանտըգ	44.50
ԲԻՐԻՆՆ ճէնօլա չուվալը	45.50
» Ինկիլիզ »	32.50
» Բիզօն »	53.
» Ֆիլիպէ »	44.
ԿԱԶ Պալմուս Սանըղը	9.20
» Թրայա »	հօգ
Չէքիլ իւղէ քէլլէ	1.80/2.
ԳԱՐԻՆԻ իւղիւմ	85.
ԽՈՒՐՄԱ	40.47
ԹՈՒՂ Թունուղ չուվալ	12. 20
ԹՈՒՂ Ֆօղա »	13.50
Ետմուրթա	6.50

ԲԱԶՄԱՎԷՊ

Ազգային. Բանասիրական, Գրական Պատմական Կենսագրական ամսաթերթ Բաժնեգին տարեկան 10 ֆր. Հասցէ՝ Rédaction de la Revue «BAZMAVEP» St. Lazare VENISE (Italie)

ԼՈՒՍԱԲԵՐ-ԱՐԵՎ

Ազգային և Քաղաքական կը հրատարակուի Երեքշաբթի, Հինգ- բայթի և Շաբաթ օրերը: Տարեկան ամսեգին 15 ֆր. Դիմել՝ Rédaction du journal «LOUSSAPER-AREV» Le CAIRE (Egypte)

ՄՇԱԿ

Քաղաքական և Գրական, Օրաքեր- 37 տարուան) բաժանորդագրին տէ տարին 30 ֆր.: 120 դր. - Դիմել՝ Rédaction du journal «MSCHAK» TIFLIS (Cacase)

ԱԶԳ

Քաղաքական, Գրական և Քաղաքական, Տարեկան Բաժնեգին 15 ֆր. Դիմել՝ Rédaction du journal «Azk» 16 Beach St. 4th Floor BOSTON MASS

Издатель: Х Курбегян
Հայաւան «Իրաւունք» Վառնա